ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲԵՐԴԻԿԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 19

« 21 » « 12 » 20 12 թ.

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ ,10-րդ և 11-րդ հոդվածներով , Տեղական Ինքնակառավարման Մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բերդիկ համայնքի 2013թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը `

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան է նոր շենքերի շինությունների ներառյալ ոչ հիմնական /շինարարության տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար `

ա)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի ,այդ թվում՝ այգեգործական ամառանոցային տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

բ)սույն կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

բ.ա)201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ:

բ.բ)501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ:

բ.գ)1001-ից ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ)մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ:

դ)20 և ավելի քմ քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար, եթե սահմանվածկարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա)չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետհարկավ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 1500 դրամ;

բ)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա և հետհարկավ /օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության,ապա բացի սույն կետի ա ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ)նախատեսվում է միայն կցակառույցների,վերակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0,5 գործակիցը:

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի և վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝